

բակրել եւ զանոնք կաթի կը կանչէ, եւ ապա հեղաբարոյ կը կանգնի կըթուորներու, նոր հարսերու եւ աղջիկներու, ծանր հողամաններու, կթոցներու մօտ, կթուելու համար. տուէք ինծի այդ ոչխարներու մայիւնը, այդ հորթերու կանչը, այդ կովերու բառաչը, այդ մատակներու թաւ դողուցը, ու ես հաճոյքով ձեզ կը թողում Հոռմի Գոնատանցան, Միլանոյի Սկալան, Նիւ Եորքի Մեթրոպօլիտան օրերաները. տուէք ինծի մեր նախնադնի ճախճախուտի առուակի հեղասահ գլղլանքը. իր վերեւից բխող եօթ աղբիւրներու միացեալ լեզուակներով, ու ես ձեզ կը նուիրեմ Բրամսի, Մոցարթի եւ Հայդնի սիմֆօնիաները:

Ահա այսպէս էր Տարօնը, երբ ես զայն ձգեցի հաղար ինը հարիւր տասի Վարդապետի վաղորդայնին, հարիւրաւոր հայաչէն աւաններու հազարաւոր թոնիրներէն օրհնութեան եւ առատութեան ժանդառի մուխը՝ բուրմառներու նման դէպի երկինք կ'անցէր: Ու մեր բնականոն կեանքը կը շարունակուէր: Ճշմարիտ է որ մենք կ'աշխատէինք՝ Թուրքը կը վայելէր, մենք կը վարէինք ու ցանէինք՝ Թուրքը կը տանէր եւ Գիւրտը կը դողնար ու կը յափշտակէր. ճշմարիտ է այդ: Բայց երկուստեք վարժած էինք այդ արարքներուն, ու այդ ամէնը բնական կը թուէր. ու այժմ բարեկամներ եւ ծանօթներ, ելեր ինծի՝ լըսէք թէ «Ցնորած ես, Տարօնը այլեւս գոյութիւն չունի, հայի չունին անգամ չկայ անոր մթնոլորտի մէջ»:

Անկարելի է այդ, չեմ հաւատար, միայն այն ատեն կը հաւատամ, երբ իմ հարազատ աչքերով տեսնեմ, որ երկնից մէջ Արարիչն ալ մահացեր է, ու հրեշտակները՝ փող ու շեփորով, տաղ ու ասմունքով անոր թաղումն է կը կատարեն, ամպի ծուէններուն մէջ պարուրելով անոր աննիւթեղէն էութիւնը...

Ու այն ատեն, իմ հոգու խորքից սեւ հառաչանք մը կը փրթի, որու վանկերը հրեղէն մոշիկներու վերածուելով հետեւեալ վերտառութիւնը կը գրեն.

Ո՞վ եղաւ այն մարդը, այն իշխանութիւնը, որ Յեղափոխութեան արնախառն գինիով հարբած, Տարօնն ու Վասպուրականը, Ղարսն ու Արտահանը, Այրարատն իրջուխտակ Մասիսներով իբրեւ ընծայ Թուրքին նուիրեց:

Օրը վերջացաւ Տարօնայ մէջ:

ՏՈՔԹ. Ա. ԱԼԻԽԱՆՅԱՆ
(Մուսասիբքի)

Հ. ՂՈՒԿԱՍ ՍԵՐԱՍՏԱՅԻ

1709 - 1752

ՀԵՂԻՆԱԿ ԴԱԻԻԹ ԲԵԿԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Դաւիթ Բեկի հերոսամարտին 250ամեակը տօնախմբուած ատեն, չենք կրնար չանդադառնալ անոր վրայ՝ որ սերտօրէն միացած է Դաւիթ Բեկի պատմութեան հետ, առանց որուն Ղափանի Հայրենասիրական արարքը պիտի մնար ծածուկ, անհետանալով այն անթիւ ազգային հերոսութիւններուն հետ՝ որոնք անցեալին մէջ կատարած են մեր նախնիքները, առանց հետք մը ձգելու մեզի: Այդ դէմքը՝ Մխիթար Աբրահօր աշակերտներէն՝ Հ. Ղուկաս Սերաստադէն է, մականունով Ստեփանոսեան, որուն հայրենասիրական ոգին է կը պարտինք Դաւիթ Բեկի պատմութիւնը:

1728ին կ'աւարտին Դաւիթ Բեկի պատերազմները. անոր զօրավարներէն Ստեփանոս Շահումեան, որ ականատեսներու վկայութեամբ է «անձն բարի յոյժ», կ'անցնի Լիվոնոյ ու ապա Վենետիկ. 1733 Հոկտ. 16ին կը գտնենք զինքը Ս. Ղազար, ուր խմբելով իր չորս կողմը հայրենասէր վարդապետներն ու նոյնիսկ աշակերտութիւնը, որոնց մէջն է նաեւ Ղուկաս Սարկաւազ, կը պատմէ իր անցեալ կեանքն ու մղուած ազգային հերոսամարտը: Արիւնքի ունեցած ծանօթութիւններուն համաձայն, Ստեփանոս Շահումեան դեռ Վենետիկ կը գտնուի 1736-1737 թուականներուն, եւ շատ հաւանաբար նետիկ կը գտնուի 1736-1737 թուականներուն, եւ շատ հաւանաբար այդ շրջանին է որ գրի առնուած է Դաւիթ Բեկի պատմութիւնը, Հ. Ղուկաս Սերաստացիի գրիչով:

Հ. Ղուկաս Սերաստացիի նման գործի մը ձեռնարկելու գաղափարը՝ ապացոյց է իր հանճարին, պատմական գործերու կարեւորութեան ըմբռնումին ու մանաւանդ բացառիկ հայրենասիրութեան. չէր բաւականացած լսելով պատմութիւնը, չէր դժագած իր խանդավառութեամբը, այլ ուզած էր նոյն խանդը աւանդել յաջորդներուն, նոյն հայրենասիրական ոգին վառ պահել ապագայ սերունդը:

հանեալք հետեւեալ բանքս կամ բառքս», «ի բանից Յօհանու Կաթողիկոսին», «ի Մովսիսէ Խորենացոյ», «ի Զենոբայ», «ի Լամբրոնացոյն» եւն.:

Երկրորդ տետրակի մը մէջ յօրինած է զանազան աշխարհացոյցերու այբուբենական բառարանը, իւրաքանչիւր բառի դիմաց դնելով նշան մը՝ համապատասխան աշխարհացոյցին: Օգտագործած աշխարհացոյցերու ու գործածած նշաններուն մասին կու տայ մանրամասն տեղեկութիւն հետեւեալ վերնագրով. «Յանկ բառից աշխարհացոյցին որ ըստ Իսահակայ եւ այլոց. թիւն հայերէն նշանակէ ըզգիծան արեւելեան կամ արեւմտեան, իսկ ռախամն հիւսիսոյ եւ հարաւոյ. չակերտքն ի լուսանցն՝ ցուցանեն զքաղաքն զայն կամ գաւառն գոլ Հայոց, ռախամն ի լուսանցն ցուցանէ զայն գոլ յայլ թարգմանեալ գրեանց որ կայ գրեալ զկնի այբենարանիս: Դարձեալ բառքն որք են յիսահակայ աշխարհացոյցէն, որ է ի Կասպից մինչեւ ցկիւպրոս՝ ոչ դնի նշան. բայց յիսահակայ աշխարհացոյցէն՝ որ է յԲփրատայ մինչեւ ցՀնդկիս՝ դնի այս նշան Կ. յիսահակայ՝ որ է յԲփրատայ մինչեւ ցԼիւրիկեայ՝ դնի այս Բ. յիսահակայ որ է ի Սպանոլ մինչեւ ցԽորասան՝ դնի այս Գ. ի Պտղոմեայ այս Վ, ի համատարած աշխարհացոյցէն Հայոց այս Ծ. Կուլիալմոս Սամսոն որ զպատրիարդանոցաց այս +. ինկլիզին որ ըստ Խորենացոյն այս 0»: Յատուկ անունները օգտագործելու դիւրին կամ գործնական ձեւ մըն ալ ստեղծած է, այսինքն հետեւած է հնչաբանական օրէնքներուն, այնպէս որ Բ գիրով սկսող յատուկ անուններուն կը յաջորդէ Պ գիրով սկսողները, ապա Փ եւ Ծ. Գ գիրին կը յաջորդեն Կ, Ք: Դ գիրին՝ Թ, Տ: Ե գիրին՝ Է: Խ գիրին՝ Ղ: Բ գիրին՝ Ր:

Նոյն դրութեամբ յօրինած է Պտղոմէոսի աշխարհացոյցին տեղագրական յատուկ անուններու ցանկը, լուսանցներուն վրայ ստորակէտով մը կը նշանակէ այն բառերը որոնք Հայաստանի աշխարհագրութեան կը պատկանին եւ կամ կրնան պատկանիլ. այսպէս օրինակի համար «Անգիթա այսինքն Հանգիթ», «Արիսա կամ Արեսա ծով, որ այժմ ասի Արմալ», «Արսեսա կամ Արսէա, այսինքն Արմէշ կամ Արտասիսան», «Պալիսպիկա կամ Պալիսպէկա, երեւի Բալախովիտ» եւն.:

Հայաստանի աշխարհագրութեան բուն դասագիրքը, որ յօրինած է Հ. Ղուկաս Սեբաստացի, կը բաղկանայ շուրջ 300 միջակադիր էջերէ, բաժնուած երեք մասերու: Առաջին մասով (էջ 1-11) կու տայ ընդհանուր ծանօթութիւն աշխարհագրական գիտութեան մասին, լայնութեան եւ երկարութեան գիծերուն, անոնց աստիճաններուն. համառօտ մը կը բացատրէ պատճառը «երկայնութեան եւ կարճութեան տուրնջեան եւ գիշերոյ», կու տայ համապատասխան աղիւսակներ: Այս առաջին մասը կը փակէ մղոնական չափերու եւ անոնց ըստորաբաժանումներու մասին յատուկ գլուխ մը յատկացնելով:

Գիրքին երկրորդ մասով կը սկսի Հայաստանի աշխարհագրութեան դասագիրքը (էջ 12-132), բաժնուած 27 գլուխներու, ճոխացած երեք քարտէսներով, որոնք իրենց պարզութեամբ՝ հեղինակին մըտքին յատկութիւնը կը մատնանշեն: Դասագիրքին առաջին գլուխը դժբախտաբար չէ օրինակուած, համապատասխան թույթերը թողուած են դատարկ (էջ 12-24), հաւանաբար պիտի չօչափէր Հայաստանի տեղագրական ընդհանուր դիտելիքներ. անկարելի է որ հեղինակը զայն կատարեալ ձեւով մը մեզի ներկայացնելու փափաքէն մղուած՝ յետաձգած ըլլայ անոր խմբագրութիւնը:

Հ. Ղուկասի դասագիրքը իր տեսակին մէջ առաջինն ըլլալով, հոս կու տանք անոր նիւթերու ցանկը, նիւթովս հետաքրքրուող սովորականներու արդար հետաքրքրութեան ընդառաջելու համար:

	Էջ
Գլուխ Բ. Հայաստան առ հասարակ բաժանի Եփրատ գետովն ի Մեծն եւ ի Փոքր կամ ի Միջերկրեայ եւ կամ յԱրեւմտեայ Հայս	25
Գ. Առաջին աշխարհն Մեծին Հայոց, որ ասի Բարձր Հայք	33
Դ. Երկրորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Զորբորդ Հայք ասի	37
Ե. Երրորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Աղձնիք ասի	40
Զ. Զորբորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Տուրուբրան ասի	43
Է. Հինգերորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Մոկք ասի	50
Ը. Վեցերորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Կորճայք ասի, կամ Կորդեայք	52
Թ. Վեցերորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Պարսկահայք ասի	54
Ժ. Եօթներորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Վասպուրական ասի	56
ԺԱ. Ութերորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Միւնիք ասի	63
ԺԲ. Իններորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Արցախ ասի	71
ԺԳ. Տասներորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Փայտակարան ասի	74
ԺԴ. Մետասաներորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Փալտիք ասի	79
ԺԵ. Երկոտասաներորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Պուլաք ասի	81
ԺԶ. Երեքտասաներորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Տայք ասի	83
ԺԷ. Զորեքտասաներորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Արարատ ասի	85
ԺԸ. Հնգետասաներորդ աշխարհն Մեծին Հայոց, որ Վասպուրական ասի	95
ԺԹ. Մեծն Հայաստան ունէր եւ զայսոսիկ քաղաքս, ըստ Պտղոմեայ աշխարհագրին, որք ոչ յիշատակեցան ի վերոյ	95
ԺՐ. Յաղազս յարեւմտեայ կողման Հայոց, նախ թէ ո՞րք իցեն Գամիրքն, այսինքն Կապադովկիայ, Կիլիկիայ եւ Եփրատացիքն. երկրորդ թէ արդեօք սոքա առ հասարակ ասիցիոն փոքր Հայք կամ ոչ	99
Ի. Յաղազս փոքուն Հայոց	101
ԻԱ. Դարձեալ յաղազս Միջերկրեայ կամ արեւմտեայ կողման Հայոց, եւ թէ զիարդ Կապադովկիայ, Կիլիկիայ եւ Եփրատացիքն ի Հայս	107
ԻԲ. Յաղազս սահմանի եւ բաժանման արեւմտեայ կողման Հայոց	113
ԻԳ. Յաղազս առաջին Հայոց	115
ԻԴ. Թէ ո՞րքան քաղաքս ունէր աշխարհն առաջին Հայոց	121
ԻԵ. Յաղազս երկրորդ Հայոց եւ գաւառաց եւ քաղաքաց նորա	123
ԻԶ. Յաղազս Կիլիկիայ եւ Եփրատացոյց աշխարհին	125
ԻԷ. Յաղազս երրորդ Հայոց եւ գաւառաց եւ քաղաքաց նորա	129

կարութիւնը, անիւներու ակռաներու թիւը, չափն ու համապատասխան ժամերը: Ունի երկրորդ քարտէս մը եւս «Առաքելոց եկեղեցւոյ զանգակին», որ նոյնպէս կը բացատրէ անոր կազմը: Այս ժամացոյցներու հիման վրայ ինքնաշխատութեամբ յօրինած է Ս. Ղազարի զանգակատան ժամացոյցը, որ իր մահէն ետք պիտի հնչէ: Վանքիս պաշտօնական ժամանակագիրը, Հ. Մկրտիչ Աւգերեան, կը գրէ թէ Մխիթար Աբրահամ մահէն տարի մը ետք, 1750ին, կը կանգնի Ս. Ղազարի զանգակատունը եւ «ի միջի եղեալ ճարտարագործ մեծ ժամացոյցն երկաթի, որ երկիցս հարկանէ զժամ իւրաքանչիւր, արուեստակերտեաց Վ. Հ. Ղուկաս Վրդ. Սերաստացի, առանց ուսանելոյ յուսմեքէ, զի էր ի բնէ այր յոյժ հնարագէտ, բայց ինքն չուէ ի քարոզութիւն նախ քան զեղբորումն ժամացուցին ի զանգակատան, որում եթէ ներկայ լինէր, անշուշտ առաւել կատարելագործէր»⁸:

Ճիշդագիտական կազմին տկարութեան պատճառով է որ Մխիթար Աբրահամ չէր ղրկած զինքը առաքելութեան, բայց անոր մահէն տարի մը ետք, Մելգոնեան Աբրահայրը կը ղրկէ Արեւելք: 1750 Յունիս 6ին ճամբայ կ'ելլէ դէպի Պոլիս, ապա շարունակելու համար դէպի Հայաստանի ներքին գաւառները, որովհետեւ ինքը սահմանուած էր «վասն Հայաստան աշխարհի», խնդրած ըլլալով Մելգոնեան Աբրահամի երթալ չրջիլ ամբողջ Հայաստանի գաւառները, կատարելագործելու համար իր աշխարհագրութեան դասագիրքը ու մանաւանդ «վասն պէսպէս զննութեանց հնութեան ի պէտս հասարակութեանն»⁹: Հակառակ իր տկարութեան՝ ազգային հոգին կը խանդավառէր զինքը, կ'ուզէր Ս. Ղազար հաւաքել հայ ձեռագիրներն ու հնութիւնները, դարձնելով զայն գիտութեան կեդրոն: Հիմնադրէն առած խանդն ու կրակը մինչեւ մահը անմար պիտի մնայ հոգիին մէջ: Նոյն տարւոյն Հոկտեմբեր 7ին կ'ուղղուի Թոխաթ, Սերաստիա, Բրզնիք, կը ծրագրէ հասնիլ մինչեւ Սպահան: 1751 Յունիս ամսուն կը գտնենք զինքը Տիգրանակերտ, ուսկից կը գրէ թէ «վասն ձեռագիր գրեանց որչափ կարն է՝ հոգամ» եւ թէ յաջորդ ամսուն կը փափաքի գտնուիլ Մուշ «վասն գրեանց, զի տեղեկացեալ եմ թէ անդէն յԱռաքելոց վանսն գտանին բազում անգիւտ գրեանք»:

Մուշ չհասած, Առինճ գիւղին մօտ Հ. Ղուկաս ծանր կերպով կը հիւանդանայ, եւ 1752 տարւոյն Սեպտեմբեր ամսոյն առաջին օրերուն կը վախճանի 42 տարեկանին: Մօտը գտնուող քահանաները հանդիսաւոր արարողութեամբ կը կատարեն թաղման կարգը, իսկ քովը գտնուած ձեռագիրները կը ղրկեն Ս. Ղազար: Վանքիս ժամանակագիրը, Հ. Մկրտիչ Աւգերեան, կը վկայէ թէ «թէպէտ քաղաքակից

8. Ժամանակագրութիւն Հ. Մկրտիչ Աւգերեանի, Հտ. Ա., էջ 17:

9. Անդ, էջ 40:

էր պատուական Հօրս մերոյ Տեառն Մխիթարի մեծի Աբրայի, բայց ոչ երբեք լսելի եղեւ ի բերանոյ նորա ասել՝ թէ ես քաղաքակից եմ Մխիթարայ Աբրայի եւ կամ թէ ի քաղաքէ մերմէ է»¹⁰:

Կը մարէր երկրէս կեանք մը եւս, կը դադրէր բարախելէ սիրտ մը՝ որ ապրած էր հայրենիքի յիշատակով, անոր պատմութեամբ, անոր աշխարհագրութեամբ: Իբր ճշմարիտ հայրենասէր մը բերած էր իր խոնարհ կարծուած նպաստը՝ Հայ մշակոյթին ու պատմութեան, անմահ դիւցազուններու ցանկին մէջ արձանագրելով Դաւիթ Բեկի դէմքը:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

10. Անդ, էջ 88: